ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆՆԵՐԱՌՄԱՆ 2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

27/03/2023 - 12/04/2023

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 5 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 5 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

11 կողմ

3 դեմ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆՆԵՐԱՌՄԱՆ 2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Վահան Սարգսյան 12.04.2023 18:01:21	Խոսք չկար, կարծես թե, բրայլյան դասագրքերի տպագրության և դրանցով, ըստ անհրաժեշտության, դպրոցների ապահովման մասին:	2023 թվականի ՀՀ պետական բյուջեի միջոցներով ԿԳՄՍՆ իրականացնում է դասագրքերի տպագրություն, որի շրջանակում տպագրվում են նաև բրայլյան դասագրքեր տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Միաժամանակ, դրամաշնորհի ծրագրերով իրականացվում է նաև բրայլյան գրքերի տպագրություն: Ծրագրերը շարունակական են:	
2	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների	Մեզ համար սկզբունքորեն անընդունելի է խնամքի ծառայությունների փոխակերպման (ապաինստիտուցիոնալացման) առանձին	Առաջարկը չի ընդունվել, նախագծով Խնամքի ծառայությունների փոխակերպումը	

	օրակարգ» ՀԿ 12.04.2023 17:56:15	ծրագրի մտքից հրաժարվելու Կառավարության որոշումը: Բացի այդ, գործողություններն առանց բովանդակային համապատասխանեցումների և համատեքստի մանրամասն նկարագրության Համալիր ծրագրում ընդգրկելը չի կարող բերել ապաինստիտուցիոնալացման նպատակի նվաճմանը: Ուստի, այս մասով ևս առաջարկում ենք վերադառնալ նախագծի առաջին տարբերակին և ընդունել ապաինստիտուցիոնալացման համար առանձին ծրագիր՝ համապատասխանող Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի՝ ապաինստիտուցիոնալացման (այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում) մասին ուղեցույցին (2022 թ.,CRPD/C/5):	սահմանվել է որպես առաջնահերթություն, միաժամանակ սահմանվել են այն միջոցառումները, որոնք կնպաստեն դրա իրագործմանը: Համալիր ծրագիրը հնարավորություն է տալիս տարբեր միջոցառումներ մեկ տեղելու նույն փաստաթղթում, ուստի անձին փաստաթղթեր մշակելու անհրաժեշտություն չկա:	
3	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 12.04.2023 17:56:15	Տարբեր դերակատարների փոփոխությունների առաջարկների ընդունման հետևանքով նախագծի այս տարբերակում տեղ են գտել մի շարք տեխնիկական և էական (բովանդակային) թերություններ, որոնք ենթակա են վերանայման, այդ թվում՝ գործողությունների ժամկետների համապատասխանեցումը, այնպիսի գործողությունների բացառումը, որոնք արդեն իրականացված են կամ գտնվում են իրականացման վերջին փուլում: Հաշվի	Առաջարկը չի ընդունվել: Նախագծի առաջին տարբերակը վարչապետի աշխատակազմից վերադարձվել է լրամշակման, որոշակի ցուցումներով:	

		առնելով վերոնշյալը՝ հավելված 2-ի մասին մանրամասն առաջարկներ ներկայացնելու փոխարեն առաջարկում ենք վերադառնալ նախագծի առաջին տարբերակին: Վերջինս մշակվածության տեսանկյունից համարում ենք առավել համակարգված, ժամանակահատվածի պլանավորման առումով առավել տրամաբանական, չափելի և համապատասխան:		
4	"Տնտեսական իրավունքի կենտրոն" Հասարակական կազմակերպություն 02.04.2023 13:19:33	Մովսես Արիստակեսյան Տնտեսական իրավունքի կենտրոն ՀԿ նախագահ Հիմնականում համաձայն լինելով նախագծին, ցանկանում ենք նշել նաև հետևյալը. Հաշմանդամություն ունեցող անձանց ներառան 2023-027 թթ համալիր ծրագրով նախատեսված է դրա և դրա կենսագործման միջոցառումների մշտադիտարկման համար ստեղծել աշխատանքային խումբ՝ 5-10 անձից բաղկացած: Սակայն չի նշվում, թե մասնագիտական ինչ պահանջների պետք է բավարարեն այդ անձինք, ինչպես է նրանց աշխատանքը վարձատրվելու, ով է ֆինանսավորելու դրա գործունեությունը: Մեր կարծիքով այդ խմբում չպետք է մտնեն պետական կառավարմ ոն ու տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ, որոնք ներգրավված կարող	Առաջարկը չի ընդունվել, համաձայն նախագծի Համալիր ծրագրի մշտադիտարկումն իրականացնող աշխատանքային խմբի կազմը նախատեսված է բավականին ընդգրկուն և Աշխատանքային խմբի անդամության թեկնածուներ առաջադրելիս նախապատվությունը պետք է տրվի այն անձանց, որոնք ունեն մշտադիտարկման և գնահատման փորձ, իրենց ծառայության (աշխատանքային գործունեության) ընթացքում առավել հաճախ են առնչվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման հարցերին:	

	Նախնական նախագիծը նշանակում է ընթացքում հաշվի են առնվել նաև <աշխատանքային ուսումնական ուղեցույց>՝ նպատակ ունենալով ապահովել հետևյալ հիմնական գաղափարները՝ <շահագրգիռ կողմերի հանրային քննարկումներ> մասնակցությունը հանրակրթության բովանդակության մասին որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև <ուսումնական ծրագրերի մշակման գործընթացում> մասնակցությունը հանրակրթության բովանդակության մասին որոշումների կայացման գործընթացում՝ <ուսումնական ծրագրերի մշակման գործընթացում> հանրակրթության բովանդակության մասին որոշումների կայացման գործընթացում հանրային քննարկումների կազմակերպումը և դրանց արդյունքների հրապարակումը՝ հանրակրթության բովանդակության մասին որոշումների կայացման գործընթացում հանրային քննարկումների կազմակերպման գործընթացում հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքներ	Սոսկրա Կիսասուտակեցյան Տատեսատակա հանրակրթության բովանդակության մասին որոշումների կայացման գործընթացում հանրային քննարկումների կազմակերպման գործընթացում հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքներ և դրանց հրապարակումը՝

	կազմակերպություն 02.04.2023 13:19:33	ցանկանում ենք նշել հետևյալը. Նախագծում չի նախատեսված իրականացնել 2017 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների ծրագրի և դրա կենսագործման միջոցառումների ծրագրի իրականացման մասին հաշվետվության արդյունքների գնահատում, այդ հիման վրա առկա հիմնախնդիրների բացահայտում և դրանք վերացնելուն միտված քաղաքականության ու միջոցառումների իրականացում:	անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների ծրագրի արդյունքները:	